

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆրանկ
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի » տարեկան 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆԿԻՆ ԿԶԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռանգը դրկեղ Բեռլինէն հասցեոյ
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻՈ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

ԽճճԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՂՂԵՎՈՐ ԳՐԱԳՐՈՒՄ
ԵՑ չեմ որոշիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անբող-
ջովին կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ տեղի անգլաներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԶՈՀՈՂՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Մեր նախորդ թիւով խոստա-
ցանք ցուցնել թէ զոհողութեան
ոգիին պակասութիւնն է զլիսա-
ւոր պատճառն այն ողորմելի վի-
ճակին ուր կը գտնուին ընդհան-
րապէս մեր ներքին գործերը:
Խօսքով ամենքս ալ դրամական և
ալ ամեն զոհողութիւններ ընե-
լու միշտ տրամադիր, միշտ պատ-
րաստ, հիւսնալի ազգասէրներ
ենք, բայց երբ կարգը կուգայ
գործարարելու ինչ որ կը խոստա-
նանք մեր ձեռքերով ու խօսքերով,
խնդիրը կը փոխուի, տարբեր
գոյն ու կերպարանք կառնէ և ա-
մեն մէկերնուս անձնական նեղ
գրուածքներ, առեւտուրներու գե-
շութիւնը ևն. երեւան կեղծքն ու
բանաւոր արգելք կը հանգիստանան
մեզ՝ հանրային գործերու նիւթա-
պէս օգնելու վայելուչ չափով մը:

Հոգ չէ սակայն, որ մեր այդ նեղ
գրուածքն մէջ միշտ միջոցներ կը
գտնենք մեր անձնական ամէն
պէտքերուն, մինչեւ իսկ զարգա-
րանքներուն և զբօսանքներուն հա-
մար հարկաւոր գումարները հա-
յթաբար կը գտնուին:

Երբ ու եւ ազգային պէտքի մը
համար 5 ֆռ. խնդրելու նպատա-
կով կը ներկայանաք մէկու մը
որ նոյն օրը 1000 ֆռ. ի փո-
խանագիր մը ունի վճարելիք և
990 ֆռ. միայն պատրաստ ունի
իր անտուկին մէջ, պարոնը շատ
նեղութեան մէջ է, չկրնար ձեռք
խնդիրը կատարել. միայն թէ
կրնայ պատահիլ որ տեսնէք թէ
կարող եղած է նոյն օրը թատրոն
կամ զբօսատեղի մը երթալ ու
ծախսել ձեռք խնդրած գումարին
մէկ քանի պատիկը:

Դպրոցական տուրք պահանջն-
լու համար երբ կը ներկայանաք
պարոնի մը, որ հետեւեալ օրը իր
և տիկնոջ հագուստին կամ զար-
դարանքին համար 200 ֆռ. պիտի
վճարէ, նոյնպէս նեղ գրուածքն
մէջ է, չկրնար ձեռք զոհացնիլ,
բայց կրնայ ձեռք պահանջածին
կրկինը վճարել գերձակին, եթէ
տիկինը ուզէ ապապրուած հագուս-

տին մէկ կտորին ձեռք փոխել և
այս պատճառով հարկ ըլլայ նոր
ստակարկութիւն մը ընել գերձակին
հետ:

Երթալիս խանութպանի մը քա-
նի մը ֆռանք խնդրելու համար,
դպրոցի մը շինութեան ինպատ-
Այս ալ գտնաւորաբար տասը օր
ետքը խանութի վարձք պիտի
վճարէ 500 ֆռ. և հաղիւ կարող
եղեր է մինչեւ այսօր այդ նպա-
տակին համար 350 ֆռ. հայթա-
յթալ ու կը մոռնէ թէ մնացած
150 ֆռ. ինչ կերպով պիտի ձա-
րէ. այս վիճակին մէջ ինչպէս
կրնայ նուէր մը ընել ազգին.
Բայց եթէ նոյն օրը խանութին
տէրը ներկայանայ իրեն և յայտ-
նէ թէ անշարժ կ'ստանանք իրեն
վարձապիսները բարձրացած ըլլա-
լով, այս տարի քի խափուի
համար 100 ֆռ. աւելի վարձադին
կը պահանջէ, մեր խանութպանը
միջոց կը գտնէ այս աւելորդ գու-
մարն ալ վճարելու:

Օրինակները բազմապատկելու
պէտք չկայ, քանի մը հատը կը
բաւեն երեւան հանեւ սա ճըշ-
մարտութիւնը թէ մենք տակաւին
չենք հասնել պարտաճանաչութեան
այն աստիճանին որ ազգին հա-
մար՝ իւրաքանչիւր իր կարողու-
թեան չափով, դրամ տալը իբր
ստիպողական պէտք մը նկատենք,
մեր անձնական պէտքերուն ամե-
նէն յետինին հաւասար:

Հոս է ահա վերը:

Թող մ'ըմէ իւրաքանչիւրը
ձեռքը խղճին վրայ՝ ինքնիրեն
հարցնէ թէ իր տարեկան պիտու-
ճէին մէջ, ստիպողական ծախքե-
րու կարգը, պատշաճ գումար մըն
ալ յատկացուցած է ազգ. տուր-
քերու և նուիրատուութեանց, ինչ-
պէս կը յատկացնէ չըսենք միսին
ու հացին այլ իր զարգարանքին և
զբօսանքին, պատահական բարե-
կամական նուիրատուութեանց և
ուրիշ յայտնի ծախքերու, ու-
րոյցէ կարելի է միշտ բան մը
զեղչիլ ինպատակ ազգ. պէտքերու:

Ամեն երկիր և ամեն քաղաք
հայ ազգ. անտուկները շարունակ
գատարկ են, մշտնջենաւոր անձ-
կութեան մէջ են և ամենեւին զար-

մանալի չէ այս, որովհետեւ նախ
հայ ժողովուրդը ընդհանրա-
պէս բարեկեցիկ վիճակ մը չու-
նի, և ապա՝ հայը վարժուած չէ
իր ստիպողական ծախքերուն հետ
հաշուել ինչ որ պարտի սալ ազ-
գին:

Այս երկու պատճառներուն վը-
րայ աւելցուցէք այն անտարբերու-
թիւնն ու անհոգութիւնն ալ, զորս
ազգային պաշտօններ ստանձնող
անձեր ընդհանրապէս ցոյց կու-
տան իրենց պաշտօնի պահան-
ջած ամեն աշխատութիւնները
կէտ առ կէտ կ'ստանալու մասին
և այն ատեն աւելի բանաւոր կե-
րելի զարմանալ թէ մեր ազգ.
հաստատութիւններն ու գործերը
ինչպէս կը դառնան՝ ազգի կամ
զէշ, քան զարմանալ որ բնաւ չեն
մտնէր յապաստան կանանաւորու-
թեան մը մէջ: Զոհողութեան ու-
ղիին պակասութիւնն է, կը կրկ-
նենք, որ կը խանդարէ մեր գոր-
ծերը:

ՊԱՊԵՆ ԱՒԵԼԻ ՊԱՊԱԿԱՆ

Այս յատկանշական առածը
մարդուս միտքը կուգայ՝ տեսնե-
լով այն անկեղծ ու եռանդոտ գոր-
ծունէութիւնը՝ զոր ցոյց կուտայ
պալքանեան երկի ծնած ու այսօր
մարդ եղած կառավարութիւն մը՝
տաճիկ կառավարութեան աչքը
մտնելու համար: Թուրքիային
դուրս, այս երկրին մէջ խուլ
ու աննկող հալածանք մը սկսած
է ոչ միայն այն հայերուն դէմ ու-
րոնք յեղափոխութիւն կրնան, հա-
պա և անոնց դէմ որք ապահով
ապաստանարանի մը ու անվրդով
ապրուստի մը հետամուտ են:

«Տաճիկն աւելի տաճիկ», աւի-
կա է հիմակ դարավերջիկ նորու-
թիւնը մանաւանդ Ռուսներէն մէջ,
որուն ներկայ կառավարութիւնը
հապիտական ծիծաղելի շարժում-
ներով երկրպագութիւն կրնէ թու-
րին: Հանդիպած հայուն թեւէն
կը բռնէ դուրս կը նետէ իւրեւ
նկառ ու վրաստակոր տարր, իւ-
րեւ ամենայնոյն բարիա: Ան էր
պակաս որ աշխարհիս հետ ծնած

ու հազարաւոր տարիներէ ի վեր
գոյութիւն ունեցած ազգ մը ասանկ
ընթացքներու ենթարկուէ՝ չտես,
չահամոզ կառավարութիւնէ մը որուն
ներկայացուցած ժողովուրդը պատ-
մութիւն մը իսկ չունի: Թուրքին
կողմէ հայուն հալածուիլը գուցէ
երկրաբանական կամ ցեղագրական
երեւոյթներու մէկ յեղաշրջութեան
արդիւնքն եղած ըլլայ (թէեւ այս
գիտական բացատրութեան շատ
համամիտ չեմ): և յետոյ կրօնքի
տարբերութեան տեսակէտն ալ
կայ, որ մեծ շարժառիթ մը երե-
ւան կը բերէ թրքական բարբա-
րութեանց: Ասկից դատ իբրեւ
անհամբոյր ըմբոստներ զմեզ պատ-
ժելու ամբարիշտ առարկութիւնը
ունի թուրքն իր ձեռքին մէջ:
Վերջապէս թուրքը թուրք է. մեզի
չէ մեղցնի ուղղել անոր շար բը-
նազները. մարգարէն ըրեր լմըն-
ցուցեր է ամեն բան: Մեղքը ա-
նոր ճիտը:

Ռուսմանիա հայերուն հանդէպ
իր բռնած ընթացքին արդարա-
ցուցման համար այս պատճառնե-
րէն ոչ մէկն ունի. ինք պարզա-
պէս անհամ հացկատակի դերը կը
կատարէ՝ ապագայ անիրանալի օ-
գուտներու համար թերեւս:

Բայց մինչ մէկ կողմէ հարստա-
հարուած ժողովուրդ մը կը հալա-
ծէ, միւս կողմէ Ռուսմանիա բողո-
քի ձայներ կը բարձրացնէ: Ար-
դարեւ այժմ այդ երկրին մէջ մա-
մուլ և ժողովուրդ իրար անցած են
տուալքն առնելու համար այն կար-
ծեցեալ կեղեքումներուն որոնց
կենթարկուին եղեր իրենց ազգա-
կիցները հունգարիոյ մէջ, ուր ոչ
մարդ կը խողիւղեն, ոչ տուն կը
թալլեն, ոչ պատիւ կը բռնաբա-
րեն: Տեսէք եռասիրութիւնը ինչ
ահուելի համեմատութեանց հասեր
է այժմ:

Բայց, ընդունելով որ ռուսման
կառավարութեան ընթացքը չա-
փազանց պախարակելի է, անհնա-
րին է ու եւ բացատրութիւն գրու-
նել այն անձանց ընթացքին որոնք
հայ անունը կը կրեն միմիայն սեւ
ու պիղծ արատ մը դառնալու հա-
մար այդ անունին:

Վասն զի, եթէ հաւատ ընծայ-

ուի զանազան աղբիւրներէ առնուած լուրերու, կարգ մը հայեր են նոյն իսկ որ դիւրացուցած են Ռուսիոյ ստիկանութեան գործը, յայտնելով անուններն այն անձանց որոնք յեղափոխութեան մարմինն կը պատկանին: Նախանձը որ մեր ամեն արարքներուն մէջ կը սպրդի ուտիճ որդի աւերումով, յեղափոխական մարմիններու մէջ ալ սկըսած է մուտ գտնալ, նմանօրինակ արտայայտութիւններով: Իրողութիւնը ինքնին այնքան գծուած է ու ողբալի, որ նոյն իսկ հայ թերթի մը սինտակսերն անով զբաւել անտեղի կը նկատենք. անոնք որ այսպէս ազգին դէմ կը դաւեն, արգէն ահուկի կ'երպով պէտք է տառապին իրենց խղճին սուր խայթերէն, իրենց միակ վարձատրութիւնը մարդկութեան արհամարհանքն ու ազգին թուքն ըլլալով:

Ս.

ԱԶԳ. ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ
Ի ԿԻՊՐՈՍ

Մեր աչքի առջեւ է այժմ Կիպրոս կղզիի Նիքոսիա քաղաքին մէջ նոր բացուած կրթարան-որբանոցի «Յայտարարութիւն և կանոնադր»ը:

Ուրախութեամբ կը տեղեկանանք այդ տետրակէ որ Տիար Վահան Քիւրքճեանի նախաձեռնութեամբ բացուած այդ կրթարան-որբանոցի գործ հետզհետէ աւելի համակրութեան կարժանաւորայ և հաստատութիւն կը դառնայ: Մանչէսթրի հայ գաղթականութեան

թեան անդամներէն 3 պատուաւոր վաճառականներ յանձն առած են այդ կրթարան-որբանոցի խընամակալութիւնը: Տիար Պետրոս Գրիգորիսեան ստանձնած է տառնապետութեան պաշտօնը, Տիար Սարգիս Եղիազարեան գանձապետութեան և Տիար Յովհաննէս Անդրէասեան (հաշտարար գաւառաւոր ի Մանչէսթր) պատուակալ քարտուղարութեան պաշտօնը: Խնամակալութեան նախագահութիւնն ստանձնած է Մանչէսթրի հայերի հոգեւոր հովիւը, Արժ. Տ. Թորոս քահանայ Տէր Խաչակեան:

Խնամակալութիւնն իր այս յայտարարութեամբ մի սրտառու հրուէր կարգադրած է ազգին, իր զթոսիրութեամբ և ողորմասիրութեամբ օգնելու համար ոչին որբանոցն հաստատութեան: Կը ծանուցանէ որ Տ. Վ. Քիւրքճեանի միջոցով ցարդ գանձուած նըպաստներ և կոտորուած ծախսերի հաշիւը մանրամասնօրէն իրեն ներկայ լինելու գոհացուցիչ գտած և վաւերացուցած է և այժմ իր ձեռք առած է վերին հսկողութիւնն այդ հաստատութեան օրը վնճ. Միւրտի կաթողիկոսն իր կոնդակով և Ամեն Օրմանեան պատրիարքը պաշտօնազրուով մը քաջալերած են:

Որբերէն զատ՝ որոնք ձրիաւ վարժ են, կրթարանին մէջ թուականաւոր գիշերօթիկ աշակերտներ ալ կընդունուին որոնցմէ կը պահանջուի 12 անգլիական ոսկի տարեկան՝ անունդի, հագուստի, մաքրութեան, բժշկի և դպրոցական բոլոր պիտոյքների համար: Երթեւեկ աշակերտները պէտք է

վճարեն 1 անգլ. ոսկի տուրք՝ բացի դպրոցական պիտոյքների ծախսերէն:

Ուսումնական շրջանը 4 տարի կը տեւէ և եթէ առ նուազն 15 թուականը աշակերտ գտնուի, պիտի կրնան 4 տարեկան շրջանէն վերջ շարունակել բարձրագոյն տախկիթարանի ընթացք մըն ալ:

Հաստատութիւնն իրեն կից ունի արհեստանոցի բաժին մըն ալ ուր տան աշակերտ, իր ընտրութեան համեմատ, արհեստի մը պիտի հետեւի օրական 2 ժամ՝ կամ աւելի: Ուսանելի արհեստներն են առայժմ 1. Շերամապահութիւն, 2. ատաղճադրութիւն, 3. Կոշակագրութիւն, և 4. Գերձակութիւն:

Թէ՛ ձրիաւ վարժ և թէ՛ թուականաւոր աշակերտների ընդունելութեան և դպրոցական ու է խնդրի վերաբերեալ գրութիւններ պէտք է զրկուին «առ Տնօրէն խորհուրդէն Ազգային կրթարան» Որբանոցին, ի նիկոսիա:»

(Սրմեկիւ)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ (*)

— — —

Սիւլիէն, 14 Սեպտ.

Ասկէ առաջ տեղույս երիտասարդութիւնը ձեռնարկեց ընկերութիւն մը կազմելու, որուն նպատակին և անուան մասին կարելի չըլլար համաձայնութիւն գոյացնել և այս պատճառաւ ձեռնարկը կը վիժի երկար բանակցութիւններէ:

(*) Մեր թերթին միամսեայ դադարի միջոցին ստացուած:

և տաք վիճարանութիւններէ ետքը:

Տիկինները այրերուն տուած օրինակէն առանց վհատելու, կը ջանան «խնամակալութեան» ընկերութիւն մը կազմել երկսեռ վարժարանին յառաջդիմութեան նպատակով: և սանուհեաց ձեռագործի պիտոյքները հայթայթելու նպատակով: Այս երեսոյթը նոր և մխթարական է Սիւլիէնի համար, ուր տիրող հին նախապաշարուաներ ցարդ չեն թույլատրած որ իգական ս'որ ու է մասնակցութիւն ունենայ ազգային գործերուն մէջ: Ի սրտէ խնդակցելով մեր ազնիւ տիկիններուն և օրիորդներուն, կը մաղթենք իրենց յաջողութիւն և յարատեւութիւն:

Խաղաղական և հոգաբարձութիւն համերաշխաբար կաշխատին յոգուտ վարժարանին և ի կարգադրութիւն տեղական խնդիրներու:

Երկաթուղիի կայսրաններէն հասած նամակներ շատ տխուր գոյներով կը նկարագրեն այն տեղերը աշխատող հայ բնակիչներուն վիճակը, որոնք արմատիք գործերուն նուազութեան պատճառով դատարար չեն կորուց գտնել:

Սիւլիստէ, 14 Սեպտ.

Կաթողիկոսական ուղեւոր հովիւ Գեր. Արքեպ. Վ. Վահանի, որ երբեք չարաթ առաջ այստեղ հասաւ, այսօր պատարագէն ետքը հոգեհանգիստ կոտորեց հայ նախապաշարուան համար, որոց յիշատակը փառարանեց ոգելից քարոզով մը:

Տեղույս կրթական գործը կա-

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐ

(ՔԱՆԱԲԱՆԱՆ ԱՔԱՌԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԻՑ)

6.

Այդ օրը Սամուէլը էլ ինձ չը մօտեցաւ, ինչպէս երեւում է նա ինձնից աւելի հին եւ մօտիկ բարեկամի էր հանդիպել: Մինչեւ միջինը ես թափառում էի միջանցքում եւ մտածում հարկիւր քառասուն միլիոնի չափ ժողովրդի մասին, որին կառավարում են Ռուս ցարերը, շարունակ խաւարի մէջ պահելով, շարունակ նրանց ամենալաւ անդամներին ճգմելով, խեղդելով, տանջելով երկաթէ շղթաների ծանրութեան տակ, մութ բանտերում, խոր խոր գետնափորներում, կախաղանի անարդ սինտակսերի վրա եւ սառցապատ հոգի ու սիրտ պաղեցնող անպատեհութեամբ: Եւ այդ բոլորը նրա համար, որ մարդկային արիւնով շաղկապած, դառն արտասուքով ողորկած գանձերը հաստատ պահեն. եւ ո՞վ է իմանում գետ քանի տարի նոյն իսկ քանի դար: . . .

Մանր մտքերը, սեւ սեւ խորհրդածութիւնները սեղմում էին իմ կոթմքը. . . . բայց իսկոյն մտքիս թերը

կտրվում էր. ի՞նչ կարող էի անել ես, հիւլէս, կամ ինձ նման հազարաւորները. երբ միլիոնները դեռ մահուան քնի մէջ են. . . . բայց եթէ այդ միլիոնները զարթնեն. . . . ահա այն ժամանակ կը հնչէ վայրկեանը դարեւոր հաշիւները մաքրելու. բայց ե՞րբ կը հասնի այդ վայրկեանը. . . .

Ահա այդ մտքերի մէջ էի երբ բանտապահը եկաւ եւ բարձր ձայնով յայտարարեց, «ով Սիբիրի ճամբով պէտք է գնայ, թո՛ղ վազվաճախ համար պատրաստ լինի»: Եւ էլ այդ ճամբով պէտք է գնայի, թէեւ ոչ իսկական Սիբիր: Վերջապէս եկաւ եւ ընթերցու ժամանակը. որից յետոյ մենք պառկեցինք: Սակայն քնել չէի կարողանում. մտածում էի վաղվա մասին. որովհետեւ լսել էի թէ հազարից աւել մարդ պէտք է գնայ վաղը եւ ես առիթ կուենեամ սեանել մի անգիլի ու ճնշող պատկեր. . . . հասաւ եւ սպասածս առաւօտը. մեզ զարթեցրին: Շտապով զգեստներս հագանք. թէյ խմեցինք եւ դուրս եկանք մի հակայական ու սեւ սեւ պատերով սրահ. . . . բայց այն ի՞նչ պատկեր էր Աստուած իմ, մազերս ցցվեցին, մարմինս սառածաց, եւ դժոխքում էի. իսկական դժոխքում: Երեւակայիւր ընթերցող. մի մոռլ կին, երեւայ, բաց միտքագոյն զգեստներով, գլուխները կէսը ածիլված: Այդ բոլորը միասին խօսում են, բայց

են լինում, ծվում են, գոռում են, դրանց հետ խառնվում է հարկաւոր շղթաների շղթանը, բանտապահների որոտալի հայհոյանքները, ծեծը, մարդկային մարմինն հասած հարածների շրիկոցը. . . .

Նկարագրել չեմ կարող, գրիչս թոյլ է: Ես կարծում եմ որ անմահ Դանտէն եթէ տեսնէր Ռուսական կեանքի այս սարսափելի պատկերը, իր դժոխքը բոլորովին ուրիշ կերպ կը նկարագրէր: Գլուխս սկսեց պտտել, եւ կարծում էի, որ ուշագնաց եմ լինելու:

Վերջապէս մեզ սկսեցին կանչել, որ իրարից շղթաներով կապեն: Նանչում էր մի երիտասարդ սպայ: Սպային մօտեցաւ մի շքեղ մուշտակով գրեթէ ծերունի մարդ. նրա հետ կային իրաւորներ, 18 տարեկան երկնադոյն աչքերով, ոսկեթել մաղերով աղջիկը, 11 տարեկան պատանի աղան. եւ երկու փոքրիկ երեխաներ: Այդ բոլորը սկսեցին լալ, արտասել, հեկեկալ եւ սպայից խնդրել որ ծերունու ձեռքը չը չլթայէ: Սակայն քարասիրտ սպան պատասխանեց.

— Գնուշու թիւններ ժամանակը անցել է. պէտք է գիմանաք. ի դուր են ձեր աղաչանքը եւ լաց ու կոծը: Իմ սիրտը կակծաց. այդքան անպոթ մարդ երեւակայել չէի կարող. ես նայում էի մատաղահաս օրիորդի արտաւաթոր աչերին. այդ վայրկեանին նրա երկնադոյն աչերը այնքան մեծ,

անբուժելի վիշտ էին արտայայտում, որ ես ամեն զոհողութեան պատրաստ էի, միայն թէ կարողանայի այն ամպամած ու երկնադոյն աչերում կրկին արեւ, կրկին կենսատու լոյս տեսնել. . . .

Սպան ինձ չը շղթայեց. սակայն գրանով նա իմ աչքում չը բարձրացաւ: Վերջապէս բարձրացաւ մի աղմուկ, երեւաց մի ակնածելի պարոն. դա հոշակաւոր բարեգործուհի Ռուս տիկին Երմակովայի հաւատարմատարն էր որ եկել էր սիրերականներին դրամ բաշխելու, ամեն մէկին մի բուրբի:

Այդ տիկինը տարեկան մի քանի հազար բուրբի այդ ձեռով զոհում է միայն Սիբիր արքայադններին:

Ամբողջ, այդ բաղմատեցակ, բաղմալիզու մարդկային տարրը հենց որ լսեց դրամի ձայնը՝ լռեց, եւ իր ագահ ու փայլուն աչքերը սեւեռեց դրամ բաշխողի վրա. . . .

Մի քանի վայրկեանից բանտապետի օգնականը գոռաց — Պատրաստվեցէք դուս գալու. եւ այդ մարդկային կաբաւանը, բաղմաթիւ շղթաների շղթան ու կանանց լացի ձայնը իրար խառնելով՝ բանտից դուրս եկան. . . .

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

ընտր բարեփոխութիւն մը ունեցաւ վարժարանին համար ուսման նոր ծրագրին մը յորինմամբ, որ կը համապատասխանէ պուլկար նախադրութեանց չորս կարգերուն ծրագրին և ուրիշ զատ բնականաբար կը պարունակէ նաեւ մայրենի լեզուի, ազգ. պատմութեան և ազգ. կրօնի դասերը:

Մեծ յոյս ունինք որ վարժարանին նոր ուսուցիչը և ուսուցչուհին, երկուքն ալ վկայեալ, ջանք չպիտի խնայեն իրենց պաշտօնավարութիւնը որքան կարելի է արդիւնաւոր ընելու:

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

Երուսաղէմի Պատր. փոխանորդը քաղաքին երեք գերմանական մանկանոցներու տեսչութեան առաջարկած էր այն հաստատութեանց մէջ պատասխարուած որբերուն հայերէն և կրօն ուսուցանելու համար հայ եկեղեցական մը իրրեւ ուսուցիչ նշանակել և թուղու որ աղաք կիրակի օրերը հայ եկեղեցիի պաշտամանց մասնակցին: Մենք բացասական պատասխան տուին: Մանկանոցներէն մէկը այս առաջարկը հաղորդած էր իր Պիլիմի տեսչութեան, որ պատասխանած է թէ այն նպատակները որոնց մանկանոցները կը կառավարուին, տրուած են այն պայմանով որ սղար կրթութիւն «բողոքական գերմանացոյ ճանցած դաստիարակութեան օրէնքով», թէ մանկանոցները նպատակ չունենալով գերմանացիներ հայ մանուկները, «երբեք չեն մտածեր ոչ կրթութեամբ և ոչ ստիպմամբ զանոնք բողոքական դաստիարակութեան բերելու: Բողոքականութեան խղճի ազատութեան օրինաց համեմատ տղաք պիտի թողուին ընտրել իրենց դաստիարակները, երբ իրենց դաստիարակութեան գործը վերջանայ և անկախ համոզում ունենան:»

Որքանամ տյս գերմաններուն զմեզ ապահովցնելու եղանակը ի մասին իրենց կրթութեան յանձնուած հայ որբերու ազագային, չատ անհիմն ու անիրական կը նկատենք, քանի որ այդ մտադրման կողմէն սնանելով օտար կրօնքի, լեզուի ու կրթութեան մը խնդրով մը մէջ, այլ ևս բնականաբար չէ որ իր հասուն տարիքին մէջ ոչ միայն սոցորուած չըլլայ հայ ազգութեան ջերմ ոգիով, հապա սառն անտարբերութեամբ վերաբերուի իր ազգին ու իր կրօնքին:

ԶՅՐԴ ՏԱՐԵԴԱՐԶ

ԳԵՈՐԳԵԱՆ ԶԵՄԱՐԱՆԻ

Սեպտեմբեր 27 ին, Գեորգեան ճեմարանին քսաներեքերորդ տարեգարձը տօնուեցաւ Ս. Էջմիածնի մէջ: Հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ, ու յետոյ վեհ. հայրիկի և Էջմիածնի միաբանութեան կողմէ հոգեհանգիստ Գեորգ. Գ. կաթողիկոսին համար, որ հիմնադրին է ճեմարանին: Տեսող Պ. Կոստանեան բանախօսութիւն մը արտասանելով տեղեկութիւններ տուաւ վարժարանի անցեալ տարեշրջանի ուսումնական վիճակի մասին: 242 ուսանող կային, որոնց 34-ը ցորեկայն, և 198-ը քաժանուած ունեցած է, մասնադիտական բաժին՝ 31 ուսանողով, դպրոցական բաժին՝ 142 ուսանողով ու նախակրթարան 69 ուսանողով: 25 ուսանող շրջանաւարտ ելած են: Միջեալ տարեշրջանին ճեմարանը ունէր 14 ուսուցիչ:

Յետոյ ճեմարանի ուսանողները երգեր երգեցին, և ապա վեհ. կաթողիկոսը խօսելով՝ փառարանեց ճեմարանի բարեբաղին յիշատակը և ի մէջ այլոց ըսաւ թէ հոգեւոր կաթողիկոսը իր հիմնած ճեմարանին համար 300,000 ռուպլի յատկացուցեր և 75,000 ռ. ի Բջնի գիւղը գներ է:

Իրիկուան չքեղ հրախաղութիւն տեղի ունեցաւ. երկու հազարէ աւելի ուխտաւորներ ներկայ էին. ճեմարանին աշակերտները կերգէին ժողովրդական ու ազգային երգեր: Ճեմարանի մէջ տրուեցաւ ընթերց., որուն մասնակցեցան ճեմարանաւարտ ուսուցիչներ ու քահանաներ:

ԿԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՔ

Դիւլպէս ծանուցիւք մեր վերջին թուով, թիֆլիսի մէջ թրքահայ գաղթականները մատնուած էին յետին թշուառութեան, առանց օգտուելու իրենց համար քաղաքային վարչութեան մէջ հաւաքուած դրամէն, բան մը որ բողոքի տեղի տուած էր տեղական հայ մամուլին մէջ: Այժմ կիւմանք թէ այս բողոքներու հետեւանօք, քաղաքային վարչութիւնը փութացած է հետեւեալ որոշումները ստիպելով գաղթականներու մասին. աւելի յարմար բնակարաններ յատկացնել. փառարաններով տարցնել զանոնք. գաղթականներուն տալ թէյ, շաքար, աճառ և ուրիշ անհրաժեշտ պիտոյքներ. աւելի բարձրել անոնց սընունդը. օրը առնուազն մարդկուի երկու փունտ հաց և մէկ փունտ միս տալ. հիւանդներու համար մասնաւոր դեղեր պատրաստել:

ԼՐԱՔԱՂ

«Մշակ»ի հոգեւորներ 7 թիւին մէջ հետեւեալ կը կարդանք.

Կ. Պոլսից հեռագրում են սեպտեմբերի 24-ից, որ «ներքին գործերի մինիստր Մահմուտ փաշա» հրամանագրեց Միւստօփաական վիլայէթներին ընդհանուր նահանգապետներին՝ աշաւուր ճակողութիւն ունենալ հայկական ազդեցութեայ վրա, որը վերջերս այդ տեղերում իբր թէ գործընդուն է, և նոյնպէս եռանդուն միջոցներ ձեռք առնել մի քանի տեղերում երեւեցած հայկական հրոսակաւորների դէմ: Մահմուտ փաշա կերպով հրամանագրեց Տրապիզոնի վալիին անյապաղ միջոցներ ձեռք առնել ջնջելու կամ ձերբակալելու հայկական հրոսակաւորները, որը ահա երկու տարի է արդէն անպատիժ գործում է Սասունի նահանգապետ Սեփեմի ներքին գործերի մինիստրը մի հեռագիր է ստացել Տրապիզոնի ընդհանուր նահանգապետից, որի մէջ այդ վերջինը հաղորդում է, թէ իր գործընդուն երեք օր առաջ աշաւուր է դեբեփեցնել աւազակախմբից մէկի պարագլխին, Միւնաս անուանով մէկին, և նրա 35 զինուոր համալրողներին: Թիւրքերը իրանց այդ աշուղթեամբ պարտական են հայ յեղափոխականներից մէկի կնոջ մատնութեանը: Այդ կնոջ համար անտանելի էր դարձել լեռների վրա և անտառների մէջ անդադար թափառելը, և այդ պատճառով նա փախել էր թիւրքերի մօտ և ցոյց տուել ապստամբների տեղը: Մի և նոյն ժամանակ Սասունի իշխանութիւնները հաղորդում են Բ. Դրան, թէ այնտեղի վիլայէթում թափառում են անգլիներն խօսող մի քանի անձինք: Այդ անձինք իրանց միսօծնուր են ձեւացնում, և իբր թէ կրօնական պրօպագանդայի համար դրամական նպաստներ են բաժանում հայ աղաքներու կողմէն:

— Թայմլի Կ. Պոլսոյ թղթակիցը հեռագրած է թէ Օրմանեան պատրիարքն ու ազգ. կեդրոնական վարչութիւնը տեղեկագիր մը պատրաստելով պիտի ներկայացնեն Սուլթանին, առաջարկելով 1. օգնութիւն և պաշտպանութիւն հայ որբերու. 2. ուստի բաշխում դաստաւար թշուառ ժողովրդեան. 3. թաղամասերում հայերու մէկ քաղաքէ ուրիշ քաղաք փոխադրութեան. 4. վերջ Պոլսի արհիէպիսկոպոսի հայերուն դէմ հաւածման. 5. հայկական դասաներու մէջ թիւրք սղաշտօնեաներու ի գործ դրած հարստահարութիւններուն արգելք:

Եթէ այս առաջարկներ չընդունուին Սուլթանին կողմէ, Պատրիարքը պիտի յայտնէ թէ ինք ու վարչութիւն պիտի ստիպուին հրաժարիլ:

«ԻԹԹԻՅԱՆ» ԿԱԶԹԱՍԸ

Սօփիատա թիւրքէն նէշը օլընան իրքիֆազ կաղէթաւորն ոսն նուախեանտէ աթիտէքի օղունմըշտը:

«Պու պիր գաշ հաֆթա քարփընտա «Իթիֆազ» կաղէթաւոր տէվլէթի ալիյէնին պազը պէօյիւք մէմուրարըն (պէօյիւք միւրթէքի պլէրին) հազարընտա օլան իսապարաթ իւլէրինէ: Սօփիատա պուլընան տէվլէթի միւշարիլէյհին գօմիսէրի ալիսի Նուսուհի պէյէֆէնտի հազրէթլէրի թաթիլի լիսան իշիւն պիր ազ նասիհաթ էյլէմէք արդու պուլսըմըշտը իսէտէ, իթիֆազը պէրմիլ ճէնապը հազգ վէ Բեսուպի իլէ խալիֆէի զիշանընտան զայընընըն նասիհաթըն իսթիմա էյլէյէմէք գուլազարա մալիք օլմաուրընը վէ պու նիւզաքն մինինտ Ալլահ մահրումիյէթիմիլ հասէպի իլէ ափի պուլսըմըշտ վէ գաշմէթէ քաթլանմամար իշիւն տէրիլանէրէճա իսթիմիլ տիր վէ մա մաֆիի տէվլէթի ալիյէի ալիշանըն նիճէ սէնէլէյիտէն պէրի հէյթարափարտան՝ ըսեանլարըն վիճեմի իլէ իւլամ միլլէթինին զաֆլէթտէ թուլթմուշ վէ ալիլաթէթէ իլլէթ մէյտանտա օլան ճափաղընթիւրդի կէթիրուպ վէ առաքն տալիք վիճուաք գուտուսիլէրի իլէ իֆթիխարը ուսումիմիլ օլան զաթը հազրէթի միւլիւքանէնին հազգը գուտուսիլէրինէ պիր թազըմ իֆթիխարըն իսնատ իսթիմիլ նէ տալի մուլլաք միւրթէքիպ վէ ինսաֆը հիլ օլմայանլարըն մէսէք մէլաին վէ նասուսիլէրի պատի օլմուշ վէ օլըյօր:

Եղիտէրէ լանէթ էյլէմէմէք էհլի պէյթէ մուհիպպ օլմայանլար օլտուրը կիպի զաթը հազրէթի միւլիւքանէ իլէ միլլէթ ու վաթանը էնվաի պէլալարա սէվգ էյլէմիլ վէ պու կիւնտէ կիրա իսլամլարըն պէօյիւք վէ քիւլչիւքլէրին սուլար կիպի գանլարըն տէօքտիւրմէկէ սէպէպ օլմուշ օլ մուշտար վէ միւրթէքիպ ճահիլ վէ Բատիշահ էֆէնտիմիլ զի ալտատան տալապուգ կիրուհընէվիտիյէ տիր:

Բէֆիգիմիլ իրքիֆազ կաղէթաւոր չու պէնտի էլէթիւքլարտա էհլիլինին սէֆալէթի հիւքիւմէթ վէ մէմուրարըն թաղսիրաթ վէ միւրթէքիպլիքլէրինտէն իլլէրու կէլմիլ օլտըյընը վէ կիրիտէ վէ սայիր մահլէլլէրաէ հուսուլա կէլէն ըսեանլար պու թազսիրաթ վէ իրթիքիւպաթըն սէմէրէնի իտիւկինի իթիքաֆ իտէյօր, ֆազաթ պիր թարաֆտանտա մէմուրը միւհըրմին ամիրինի մէսնէլիյէթտէն մազուր վէ մուաֆ թուլթմադտա իսէտէ, պիր թիւրք ճէրիտէսի նին պու տէրէճէ հազգանիլէթէ եազըն կէլմէսի տէ շայանը թահսին օլապիլէճէկինտէն Բէֆիգիմիլ իրքիֆազ մուհարրինի պու պապտէ թէպրիք իտէրիլ:

